ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Արթուր Համբարձումյան, Պետական պարտքի կառավարման վարչության ռազմավարության և ռիսկերի կառավարման բաժնի պետ

2. **Գործուղման վայրը և ժամկետները՝** ք. Վիեննա (Ավստրիայի Հանրապետություն) 2023 թվականի սեպտեմբերի 25-ից մինչև սեպտեմբերի 29-ը ներառյալ

3. **Հրավիրող կողմը՝** Արժույթի միջազգային հիմնադրամ

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝** մասնակցություն Պարտքի և կանխիկ հոսքերի կառավարում թեմայով դասընթացին

5. **Քննարկված թեմաները.**

- Պարտքի և կանխիկ հոսքերի կառավարման սկզբունքները,
- Կանխիկ հոսքերի կանխատեսում, կանխիկի բուֆեր,
- Հարկաբյուջետային քաղաքականություն, բյուջեի կատարում և դրանց փոխկապվածությունը պարտքի և կանխիկ հոսքերի կառավարման հետ,
- Դրամավարկային քաղաքականության փոխկապվածությունը պարտքի և կանխիկ հոսքերի կառավարման հետ,
- Պարտքային գործիքներ, կարճաժամկետ իրացվելիության կառավարման գործիքներ, կանխիկի ակտիվ կառավարում,
- Ներքին պարտքի շուկա, պարտքի կառավարման ռազմավարություն, տարեկան փոխառությունների ծրագիր:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Դասընթացին ներկա են գտնվել տարածաշրջանի 8 երկրների 26 մասնակիցներ: Դասընթացի ընթացքում ԱՄՀ-ի և ՀԲ-ի ներկայացուցիչների կողմից ներկայացվել են դասախոսություններ, որոնք իրականացվել են հարցուպատասխանի ռեժիմով: Դասախոսություններից հետո, ներկայացված թեմաների վերաբերյալ կազմակերպվել են քննարկումներ: ԱՄՀ-ի և ՀԲ-ի ներկայացուցիչների կողմից մասնակիցները բաժանվել են 5 խմբերի, որոնց առաջադրվել են պարտքի և կանխիկ հոսքերի կառավարման տարբեր վարժություններ: Խմբային աշխատանքի արդյունքում յուրաքանչյուր խմբի կողմից ներկայացվել են առաջադրված խնդիրների լուծման հետ կապված առաջարկներ և կազմակերպվել են քննարկումներ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Դասընթացի ընթացքում փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Դասընթացի ընթացքում յուրաքանչյուր թեմայի ներկայացումից հետո կազմակերպիչները «menti.com» գործիքի միջոցով հարցում էին անցկացնում մասնակից երկրներում կիրառվող պարտքի և կանխիկ հոսքերի կառավարման փորձի վերաբերյալ: Այդպիսի հարցման ընթացքում պարզվեց, որ մասնակից երկրներից շատերը, որպես կանխիկ հոսքերի կառավարման գործիք, կիրառում են ոչ միայն ժամանակավորապես ազատ միջոցների ներդրումը Կենտրոնական բանկում, այլ նաև այդ միջոցների մրցակցային եղանակով ներդրումը առևտրային բանկերում, ինչպես նաև որոշ երկրներ օգտագործում են հակադարձ ռեպո գործիքը: Հաշվի առնելով վերոգրյալը, առաջարկում եմ, որ 2024թ. առաջին եռամսյակում ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ կենտրոնական դեպոզիտարիայի, Հայաստանի ֆոնդային բորսայի և առևտրային բանկերի հետ տարբեր ձևաչափերով աշխատանքային քննարկումներ կազմակերպի ԳՄՀ ժամանակավորապես ազատ միջոցները մեկ օրից սկսած ժամկետով ՀՀ կենտրոնական

բանկում ներդնելու և/կամ առևտրային բանկերում տեղաբաշխելու, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հակադարձ ռեպո գործիք կիրառելու հնարավորության և մեխանիզմների վերաբերյալ: Կարևոր է ՀՀ ֆինանսների նախարարության բարձր ղեկավարության անմիջական ներգրավվածությունը այս գործընթացում, քանի որ ստորաբաժանումների մակարդակով նախկինում իրականացված նմանատիպ նախաձեռնությունները կասեցվել են ՀՀ կենտրոնական բանկի կողմից: Կանխիկ հոսքերի կառավարման գործիքակազմի ընդլայնումը հնարավորություն կստեղծի առավել արդյունավետ կառավարելու ԳՄՀ ժամանակավոր ազատ միջոցները՝ նվազագույնի հասցնելով յուրաքանչյուր օրվա ավարտին ԳՄՀ մնացորդի միջոցները:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

03 հոկտեմբերի, 2023թ.